ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-04

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 4 նիստի

29-ը նոյեմբերի 2024թ.

ԱԺ 314 սենյակ, ժ.10:00

Ս.թ. նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացում,
2. Մրցույթի արդյունքների ամփոփում, մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակի հաստատում: Մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակի և որոշման ներկայացում ԱԺ նախագահին:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Օրակարգի 1-ին հարց	Ա. Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի Հարցազրույցի փուլի անցկացման կանոնները: Ժամը 10:00-ին սկսվեց հավակնորդների հարցազրույցի փուլը՝ հետևյալ հաջորդականությամբ՝ Նարինե Ազարյան- ժ. 10:10-11:24, զեկուցող՝ Արուսյակ Ջուլհակյան, Տիգրան Բաբիկյան-ժ.11:25-13:00, զեկուցող՝ Նինա Փիրումյան, Ժիրայր Կարապետյան- ժ.13:10-14:50, զեկուցող՝ Սոնա Խալաֆյան, Արսեն Մանուկյան - ժ.14:52-17:25, զեկուցող՝ Հարութ Ակլունց, Արմեն Մարուխյան-ժ.17:25-18:40, զեկուցող՝ Արթուր Հովսեփյան:
Օրակարգի 2-րդ հարց	Խորհուրդը ամփոփելով արդյունքները որոշեց հաղթողներին և առաջարկեց խորհրդի անդամ Արուսյակ Ջուլհակյանին Խորհրդի որոշումը ներկայացնել Ազգային ժողովի նախագահին:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց մրցույթի հաղթողներ ճանաչել Նարինե Ազարյանին և Արմեն Մարուխյանին, հաստատեց մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը, ինչպես նաև որոշեց հանձնարարել Արուսյակ Ջուլհակյանին՝ թեկնածուներ ընտրելու մասին Խորհրդի որոշումը և*

	մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնել Ազգային ժողովի նախագահին:

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան